

Հետ միասին կը փարատի մշտեցրէն  
 իրմէ՛ ծընող զհանալի զառափարս։  
 Անհուն իղձիք և պանծալի տեսիլներ,  
 Իր սեփական զօրութեամբ,  
 Մարդուս մշտքին մէջ կը ստեղծէ երազկոտ՝  
 Դաշնակը ցապցը ու ճարտար.  
 Եւ հնչառալի ծովու վրայ  
 կը թափառի զանհուշ հոգին մարդկային.  
 Ինչպէս յանդուզըն լուրորդն  
 Ովհիթնին վերայ. բայց խազ մ' անյարմար  
 Եթէ ակնշը խոցէ,  
 կը ցընդի այն արքայութիւնը իսկոյն։  
 Ո՛վ մարդկային բնութիւն, արզ ի՛նչպէս՝ եթէ  
 Ամեն բանի մէջ զազիզագիւն և անարզ,  
 Եթէ փոշի ու ստուեր ես,  
 Այդքան վրասի՛ ըզգացուցներ կ'ունենաս,  
 Եթէ մտամբ անիւ ես,  
 Ի՛նչպէս քու է՛ն վեհ յուզումներդ ու խոհեղդ  
 Այդքան չընչին ու նշւամբ  
 Պատճառներէ կ'արթննան կամ կը մարին։

ՎԻԿՏՈՐԻՈՍ ԱԼՓԵՒԵՐԻԻ

ԻՆՔԵԱՅԻՐ ԿԵՆՍԱՅՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԱՆԸ ՎԵՐՋ

Փակելով քու վարքըդ կուրծքով մը թառուն  
 Պետի տեսնեմ, ըսի, կու՛նք, է՛մբս Վիկտոր,  
 Պետ՝ արեւոտ վայրն ու քաղցրիկ տեսնե՛մ յարկն  
 Ուրի՛կ դուն այս երկրին ըսիր մնաս բարով։

Այսպէս ըսի ես անհորուհոյդ, Ո՛վ զիտէ  
 Պետ՝ առաջաց մահուան մահճին վրայ փրոտեմ,  
 Եւ ոսկրու պահարանին մէջ սըրնուր  
 Նստի մտացո՛նքն անհուն ծածկէ պետի զիս։

Հէք քանամեակս, Ունեցար դուն ալ սակայն  
 Բախան՝ դիտերմ. բայց կը հընչէ քեզ համբան  
 Որ կը մեծնայ և որ մը զի՛ն պիտի՛ ըստի։

Յաւերթական փոզն ինձ պիտի չըհընչէ.  
 Պիտ՝ անյայտ մտամ, չունենամ մէկն որ քեզ.  
 Գործքմանիդ վերայ լալու պիտի զամ։

Թրգմ. Հ. Ա. ՂԱՅԻԿԱՆՍ

« ԿԱՐՏԻՔ » ԵՒ « ԿԵՂՄԻՔ » ԲԱՌԵՐԸ



Պրոֆ. Պետերսընի « Հայերէն և դրացի  
 լեզունները » գործոյն վրայ Գրախօսականի  
 մը մէջ (ԲԱՋՄ. Սեպտ — Հոկ.) ոյժ տրուած  
 է այն սխալ կարծիքին թէ « կեղծել և  
 կարծել միեւնոյն բառին պարզապէս եր-  
 կու ձեւերն են, ինչպէս հարցափորձը »:

Թոյլ տուէք ինձ երկողողովս ցուցնել թէ  
 այդ երկու բառերը իմաստով իրարու հա-  
 կասակ են և կազմով այլ և այլ։

Մեր զասական մատենագիրներն «կար-  
 ծել» և «կասկածել», բառերուն նոյնու-  
 թեանը գիտակցութիւնն ունենալով՝ զա-  
 նոնք իրբեւ հոմանիշ գործածած են։ Եզ-  
 նիկ կ'ըսէ. « եթէ յորժամ այլոց բաշխի-  
 ցէ զիմաստութիւն իւր, կարծիք ինչ կա-  
 րօտութեան ի ներքս մտանիցէ », ուր ա-  
 պազայ կարօտութեան կասկած կամ եր-  
 կիւղ ըսել կ'ուզէ յայտնապէս։ Երկու բա-  
 ռերը իրբեւ հոմանիշ զոյգ եւս կիրար-  
 կուած են. « Ոչ ինչ կասկած կամ կար-  
 ծիս ի մտի դնել » . (Բ. ՄԿ.)։ Կարծիքն  
 և կասկածը անմիասնական է « կեղծիքի »,   
 հետ, զի եթէ կարծիքը կամ կասկածը  
 կեղծ է, ալ ոչ անստուգութիւն կը մնայ  
 և ոչ երկիւղի տարի։

Ընդ խնդրով եղող այս բառերուն ստու-  
 զարանական կապակցութիւններն եւս կը  
 հաստատեն նոյնը. « կարծեմ » ին կրկնա-  
 կան ձեւն է « կասկածեմ » . ասոր նախա-  
 ձեւն է կած-կած-եմ, կայծ-կայծ-եմ, իսկ  
 կարծ-եմ հաւասար է կայծ-եմ-ի . ր և յ  
 ձայներուն իրարու տեղ անցնիլը լեզուա-  
 կան հոլովոյթի ծանօթ երեւոյթ մ'է. պահ-  
 լաւական sipahpatը (փազկետ՝ spahpat),  
 Հայերէն սպարապետ է, այսինքն՝ սպա-  
 յապետ։ իսկ « կեղծ »ը « կեղ » նախնական  
 արմատէ մ'է, որմէ ունինք նաեւ « կեղ-  
 եւ » արմատը։ « կեղծ »ը կը նշանակէ կեղ-  
 ամ, վրան բան մը քսած, պատած, որ-  
 պէս զի իրեն իսկական գոյնը չերեւնայ։  
 Լատին sincerus (sincere, անկեղծ) ին  
 հետ նոյն է, այսինքն անոր լատինական  
 ձեւն է պարզապէս և կը վերլուծուի —  
 sine = ան, cer = կեղ, կեղեւ և կեղծիք  
 բառերուն ստուգարանական յարնչութեան  
 ճիշդ զուգահեռական է « պատեան », և « պա-  
 տիր » կամ « պատրանք » արմատներուն  
 միջեւ եղածը. կեղեւ և պատեան նիւթա-  
 կան են, կեղծիք և պատրանք բարոյա-  
 կան իմաստ առած ձեւերն են նոյն ար-  
 մատներուն։

Տգթթ. Մ. Ա. ԳԱՐԻԵԼԵԱՆ